




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ

ՏԱՍՆՕՐԵԱՅ

Գիտական, Գրագիտական, Արուեստագիտական,
եւ Մանկավարժական



1901 ՆՈՅԵՄԲԵՐ 10 — ԹԻԻ 3

ՏՊԱԴՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

U 112490930

U 112490930

U 112490930

U 112490930

U 112490930

U 112490930

U 112490930

U 112490930



ՀԱՆԴԻՍ
ՏԱՍՆՕՐԵԱՅ

— هانراکیداغ —
مجموعه علوم

HANRAKIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 3

10 ՆՈՅԵՄԲԵՐ 1901



ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԲԱՐՁՐ. ՄԵԾ ԵՊԱՐԲՈՍ

ԽԱԼԻԼ ՐԻՖԱԲ ՓԱՇԱ

ՀԱՄԱՌՕՏ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարձր. Մեծ Եպարքոս Խալիլ Րիֆաթփաշա, որ ժամանակէ մը ի վեր հիւանդ էր, Հոկտ. 27, շաբաթ առտու մեռաւ, Նշան Թաշի իր ապարանքին մէջ, իր մահ մեծ վիշտ պատճառեց Վեհ. Սուլթանին, որ բաւհաճեցաւ իր Կայսերական ցաւակցութիւններն յայտնել տալ անոր վշտահար ընտանեաց, հրամայելով միանգամայն որ յուզարկուորութեան ծախքն իր Կայսերական գանձէն վճարուելով էյուպի Միհրիշահ Վալիտէ Սուլթանի իմարէթի պարտէզին մէջ մասնաւոր տեղ մը թաղուի, որու գերեզմանին վրայ յետոյ դամբանարան մը պիտի կառուցուի նոյնպէս Վեհ. Սուլթանի ծախքով:

Հանգուցեալ Մեծ Եպարքոսն, իր պաշտօնավարութեան վեց տարիներուն մէջ իր Վեհապետին ու երկրին մեծ ու գնահատելի ծառայութիւններ մատուցած է, ինքը փոքր հասակէն, Բ. Դրան մէջ պաշտօնի կոչուելով՝ հետզհետէ կարողացաւ յառաջանալ եւ Օսմ. Կայսրութեան ամենաբարձր պաշտօնին ու աստիճանին բարձրանալ: Հանգուցեալը գործօն ծառայութեան մէջ գտնուած է, եւ ո՛ր նահանգին կուսակալ եղած է, ամէն միջոց ի գործ դրած է նոյն տեղւոյն հանրային շինութիւնները ծաղկեցնելով՝ օգտակար հանդիսանալու համար: Սակէց զատ հանգուցեալն բանաստեղծ մը, գրագէտ մ'էր, գրած է բանաստեղծութիւններ, եւայլն:

Խալիլ Րիֆաթփաշա ծնած է 1244 (1828) տարւոյն Հոկտ. 14ին, Սէրէզի Նէվրօզօր գաւառակին Լիզա գիւղին մէջ, երեք տարեկան հասակին մէջ իր ծնողքը Սէրէզ գաղթելով հոն իր նախնական ուսումն աւարտեց, եւ 1261ին 50 ղրուշ ամսականով տեղւոյն կառավարական պաշտօնատունը մտաւ: 1264ին Սելանիկ երթալով նահանգին պաշտօնավարութեան դիւանին մէջ պաշտօնի կոչուեցաւ: Յաջորդաբար մինչեւ 1277 զանազան տեղերու մէջ պաշտօնավարելէ յետոյ, 1281ին Սիլիսթրիէի նահանգին մէքթուպճի կարգուեցաւ, 1294ին Սելանիկի, 1298ին Սըվազի, քիչ ատեն ետ-

քը Կրէտէի կուսակալ նշանակուեցաւ, բայց յետոյ դարձեալ Սըվազ փոխադրուեցաւ իր նախկին պաշտօնով:

Հանգուցեալն 1301ին Այտընի նահանգին, 1302ին Պաղտատի, 1303ին Մանասթըրի եւ 1307ին Երկրորդ անգամ ըլլալով Այտընի կուսակալ անուանեցաւ: Այս վերջին պաշտօնը հաղիւ մէկ քանի ամիս վարեց, եւ ապա Պոլիս կանչուեցաւ Ներքին Գործոց Նախարարութեան պաշտօնը ստանձնելու, զոր վեց տարի ղարեց, ժամանակ մ'ալ փոխանորդաբար վարելով Պետական Խորհրդոյ Նախագահութիւն: 1311ին (1895 Նոյեմբերին) Խալիլ Րիֆաթփաշա Մեծ Եպարքոսութեան բարձր պաշտօնին կոչուեցաւ, զոր վարեց մինչեւ վերջին վայրկեանները: 1293ին բարձրացած էր Վէզիրութեան աստիճանին:

Բոլոր Օսմանեան բարձր պատուանշաններն ունէր, ի միջի այլոց Իմթիադի, Իֆթիխարի եւ Մէճիտիէի ականակուռ պատուանշանները: Օտար Տէրութեանց կողմանէ ալ բազմաթիւ պատուանշաններ ստացած էր:

ԶԱՐԴՈՒՆՆԵՐ

Ծնողքիս մէկ հաս աղջնակ,
Անոնց ժպտիմ անուշակ,
Հոգի կուտան իմ վերայ,
Երբ կ'աշխատեմ անխնայ:

Առտուն կանուխ վազեմ դպրոց՝
Դասերուս մէջ կրթակ ու բոց.
Համբոյր տալ ինձ վարժունիս,
Թոթովելով, « Զարուհի'ս »:

Զիս բոլորեմ բոյբեր ուշիմ,
Սոխակի պէս երբ կը խօսիմ.
Զիս կը դիտեմ երբոր ուժեղ
Կը գործածեմ գրիչ կամ ասեղ:

ՎԱՐԴ

ՊԶՏԻՅ ԲԱՐԵՆՈՄԵՆԵՐՈՒՄ

Գարունը քլած էր ձեզի, քղա՛հ,
Շող, ցող, բոյր ու գեղ. ծաղիկ ու բույսիկ,
Որ բաց դաշտին մեջ խնդա՛հ ու խաղա՛հ,
Երգե՛հ ու պարե՛հ՝ անվիշտ երգանիկ :


Ինչ որ ձօնած էր ձեզի Ամառն ալ,
Կեռաս, բալ, ծիրան, ցանձ, խնձոր, սալոր,
Խաղող եւ ընկուզ, չէ՛հ կրնար մոռնալ,
Միրգե՛ր անուշիկ, հիւթեղ ու կրլոր :

Չքնաղ Վոսփորի ծիծղուն ափերէն —
— Ուր կեանքը խնծիղ ու սեր է համալ —
Աւնան հովերն ալ ձեզի կը բերեն
ձոխ պատկերներով՝ թղթիկ մը ձերմակ :

Գարունը դիւթեց ձեր աչքը փարփառ,
Անուշ էր Ամառն ա՛յնքան՝ ձեր փմփին.
Բա՛յց փափկահնչիւն Մայրենի բարբառ
Աւունը ձեզի կուսայ սրտագին :

Գարնան հրմայե՛հն, հրապրե՛հն Ամրան՝
Թող ձեր սիւքն, հոգին՝ մոգե՛հ աւելի,
Աւնանափրթիք չաւրԱԳԻՏԱՐԱՆ,
Համովն ու հոտովն ա՛յնքան հանելի :

Ա. Կ. ԿԵՒԼՊԵՆԿԵԱՆ



ԱՊՐԻԼԻ ՄԵԿԸ

— Մայրի՛կ, մայրի՛կ. եկուր, տես, ինչ
աղւոր սակաւ է, գոչեց Անժէլ մօրը սեն-
եակը վաղելով, արդեօք մէջը ի՞նչ կայ :

— Կը նայինք հիմա, ըսաւ Տէր. Մարէլ
ժպտելով » :

Եւ ճաշարահը գնաց, հոն սեղանին վը-
րայ դրուած էր խոշոր սակաւ մը, խնամով
պատատուած :

« Կնքահայրս ղրկեր է, անանկ չէ՞, մայ-
րիկ, ըսաւ Անժէլ, գիւրը կը ճանչնամ, չուտ
քակենք, արդեօք մէջը ի՞նչ կայ, չաքա-
րեղէն ըլլալու է, անգամ մըն ալ խրկեր էր,
հիմա էտկար խնդ պիտի ըլլայ » :

Տիկին Մարէլ մկրատ մը առաւ և սկսաւ
թելերը կտրել. Անժէլ չուտ մը վրայի յար-
դը ասդին առաւ. սան մը դրուած էր՝ կա-
փարիչը վերցուց :

— Հա՛ւ մը, պոռաց, կարմիր կատարով
հաւ մը :

— Սագ մըն է, ըսաւ Տիկին Մարէլ,
փորը լեցուած : Շատ աղւոր ընծայ մըն է,
որ կ'ընէ հօրեղբայրդ » : Յետոյ առանց սա-
կառէն հանելու հրամայեց որ խոհանոց տա-
նին. « Երբ տղաս տուն գայ, բերէ՛ք անոր
ցցուցէք » :

Ճաշի ժամուն էտկար սուն դարցաւ.
երբ սագը ցցուցին՝ բերնին ջուրերը վազել
սկսաւ, կ'սքանչանար կոր վրան, ամբողջ
ճաշատենեակին մէջ հոտը բուրբը է՝ կ'ըսէր :

Այս միջոցին մայրը՝ մատովը կամաց մը
մորթին վրայէն կոխեց. « Զարմանալի՛ բան,
կմկմաց, կարծես թէ... » և սագին գլուխէն
քաշելով քա՛հ քա՛հ խնդալ սկսաւ : Թուչու-
նին գլուխէն ու մորթէն գատ ուրիշ բան
չիկար, մէջը քուրջի դնելով ուռեցուցեր
էին : Էտկար քար կարեցաւ. « Շիտակը,
ըսաւ դժգոհ ձեռով մը, կնքահայրս աղւոր
խելք ըրեր է :

— Բայց շատ սիրուն կատակ է ատկա,
ըսաւ Տիկին Մարէլ, և բարեկամներու մէջ
ներելի, այսօր ապրիլի մէկն է » :

Էտկար երեսները չկախեց. որովհետեւ
այս խաղը շատ զուարճալի գտաւ. սագն
առաւ եւ դուրս ելաւ :

« Անժէլ. ինծի նայէ՛ ըսաւ քրոջը, երբ
սեղանէն ելան, բան մը ըսեմ. աղէկ չըլ-
լա՞ր, սագը Պ. Տիւպուխտնի ղրկենք » :

— Աղւոր կ'ըլլայ. բայց անգամ մը մայ-
րիկին հարցնենք :

— Ի՞նչ հարկ, երկուքնիս միայն գիտ-
նանք, ասանկն աւելի աղէկ է » :

Պատիկ աղջիկը չուտով համոզուեցաւ, և
քիչ մը ետքը Տէր և Տիկին Տիւպուխտն
կ'ընդունէին նշանաւոր սագը :

« Ի՞նչ աղւոր սագ է, գոչեց ամուսինը,
բերնիս ջուրերը կը վազէ կոր » :

— Սքանչելի է, ըսաւ կինը, բայց վըս-
տա՛հ ես թէ մեզի համար է :

— Շփոթելու տեղ չկայ. հասցէն աղէկ
ղրուած է :

— Ո՞վ խրկեր է արդեօք :

— Իրաւ որ չեմ գիտեր :

— Եկու նայէ՛ որ վաղը տունը չպիտի
ուտենք հացերնիս. շիտակը մինակ ալ չուտ-
ուիր ատկա : Պ. Թուրէի տունը խրկենք,
թէ՛ քաղաքավարութիւն մը ըրած կ'ըլլանք

և թէ պատիւ կ'ընենք ասանկ աղւոր կե-
րակուրի մը»:

Տէր և Տիկին Տիւպուխոն՝ Պ. Թուրէի
տունը պիտի ճաշէին:

«Աղէկ մտածեցիր, ըսաւ ամուսինը:
դուն սագը խրկէ, ես ալ երթամ մեր մէկ
քանի բարեկամներուն՝ տեսնեմ ո՞վ այս սի-
րուն ընծան մեզի ըրեր է»:

Իրիկուան դէմ, Պ. Տիւպուխոն, որ ար-
դէն քանի մը տեղեր այցելեր էր, Տիկին
Մարէլի տունը ներկայացաւ. հազիւ թէ
սագին վրայ քանի մը խօսք ըրեր էր, Տի-
կին Մարէլ զանգալը զարկաւ:

«Աստուած իմ, գոչեց Տիկինը, ի՞նչ
խենդութիւն ըրինք: Հիմա ի՞նչ պիտի ը-
սեն, նոր ճանչցած մարդերնիս, դեռ առա-
ջին անգամն է որ անոնց տունը ճաշի կ'եր-
թանք: Պ. Թուրէ չուտով առնուող մէկն է:

— Մտիկ րրէք, սիրելիս, չուտ մը կ'եր-
թամ, ներում կը խնդրեմ...:

— Իրիկուան ժամը տաւերկուքին, ա-
մօթ է. հիմա կուհիմա սպասենք, նայինք,
վաղը առաւօտ բան մը կը խորհինք:

Յաջորդ օրը, Պ. Տիւպուխոն, որ գիշերը
աչքը չէր գոցեր, կանուխ մը հագուեցաւ Պ.
Թուրէի տունն երթալու համար, դուրս ել-



«Ո՞ւր է սագը, հարցուց սպասուհին»:

— Չեմ գիտեր, տիկին, Պ. Էտկար դա-
րոց գացած ժամանակ հետը տարաւ:

— Ձեր ընդունած սագն, ըսաւ իւր այ-
ցելուին, երբոր սպասուհին դուրս ելաւ, իմ
ընդունածս է», եւ խնդիրը բացատրեց ա-
ւելցնելով «Շատ կը ցաւիմ որ զաւակս հա-
մարձակեր է...»:

Պ, Տիւպուխոն ալ մտիկ չըրաւ, քանի
մը բառով ներում խնդրեց և տուն վաղեց:
«Կնի՛կ, ըսաւ քրտինքը սրբելով, սագը...»

— Պ. Թուրէի տունը խրկեցի»:

Պ. Տիւպուխոն թիկնաթուրի մը վրայ ին-
կաւ. երբ ինքզինքը դտաւ, ամբողջ պատ-
մութիւնը ըրաւ կնոջը:

Լելու վրայ էր երբ հեռագիր մը ընդունեց.
Պ. Թուրէ քանի մը բառով կը յայտարարէր
թէ դուրս ելլելու ստիպուելով չպիտի կըը-
նայ Տէր և Տիկին Տիւպուխոն ճաշի ընդունիլ:

«Պզտիկ մնայինք, գոչեց խեղճը, եր-
թամ ինքզինքս արդարացնեմ», և կառք
մը ցատքելով քանի մը վայրկեանէն հասաւ.
«Պարոնը դուրս ելաւ», պատասխանեց դու-
ռը բացող սպասուորը: Պ. Տիւպուխոն ա-
ւելի պնդեց: «Պարոնին հօրեղբայրը հի-
ւանդ էր, գիշերը կանչել տուաւ». աւել-
ցուց սպասուորը:

— Արդեօք սագ մը եկա՞ւ ձեզի, երէկ:

— Ե. յո՛, պարոն, բայց տէրս տունը չի
կրնալ ճաշելուն համար, իր փեսին տունը
խրկեց զայն:

Այս փեսան բոլորովին անծանօթ էր, ուստի Պ. Տիւպուխտն ճարահատ տուն դարձաւ:

Նոյն իրիկունը, երկրորդ սագ մը խորհուրդաւ Տիկին Մարէլի տունը: Առջի սագն էր. հետը նամակ մը կար, իր ամէնէն մըտերիմ բարեկամուհիէն գրուած, որ կ'ըսէր թէ յաջորդ օրը պիտի գայ մէկտեղ ուտելու: Սագը կը պտըտէր՝ մեկնած տեղը հասեր էր, Յաջորդ օրը սքանչելի սագ մը կար Տիկին Մարէլի սեղանին վրայ. այս անգամ իրաւ փորը լեցուած էր: Տէր և Տիկին Տիւպուխտն հրաւիրեալ էին. ասիկա կը վայլէր իրենց քաջածին փոխարէն:

Էտկար լաւ մը յանդիմանուեցաւ: Տղաքները՝ իրենցմէ մեծերուն հետ ընկերոջ մը պէս վարուելու չեն: Կատակը՝ իրենց հասակացին միայն կրնան ընել:

Թարգմ.

ՋԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Տ Օ Ն Ա Վ Ա Ճ Ա Ռ Ը

Կին մը որ գիւլը կը բնակէր և բաւական ալ հարստութեան տէր էր, զաւակ չունէր: Ասոր համար միտքը դրաւ աշխատասէր ու զգօն աղջիկ մը որդեգրել իր ազգականներուն մէջէն:

Երբ տուած որոշումը խնայուեցաւ, շատ մը աղջիկներ ներկայացան իրեն: Տիկինը չուզեց հապճեպով ընտրել, հապա՛ այդ աղջիկներէն իւրաքանչիւրին ստակ տուաւ, ըսելով.

«Այսօր տօնավաճառի օր է. մեծ հրապարակը գացէք և ուզածնիդ գնեցէք, վերջը եկէք առածնիդ ցուցուցէք ինծի»:

Աղջիկներն անմիջապէս մեկնեցան և շուտ մը վերադարցան ուրախութեամբ: Գրեթէ ամէնքն ալ գոյնզգոյն ժապակէներ, մանեակներ, բանուած մետաքսեայ վզնոցներ կամ զարդարանքի վերաբերեալ բաներ աւեր էին:

Միայն Մարիամ անուն աղջիկը փոքրիկ աղօթագիրք մը և ասեղի տուփ մը գներ էր: Այս ընտրութիւնը խիստ ախարժելի երեւցաւ տիկնոջ. ուստի Մարիամի ձեռքէն բռնեց, ըսելով.

«Սիրելի աղջիկս, ուրախ եմ տեսնելով որ հիմակընէ խելքդ աշխատութեան եւ աղօթքի ես տուեր: Ուստի քեզի իմ որդեգիրս կ'ընեմ: Շարունակէ այդ ընթացքդ, զաւակս: Միշտ բարեպաշտ, աշխատասէր եղիր, և Աստուած ալ շարունակ հետդ պիտի ըլլայ. աշխատութեան ճաշակն ու աղօթքի սէլը՝ ամէնէն թանկագին գոհարներէն աւելի կը զարդարեն աղջիկ մը»:

ԾՈՎԱՅԻՆ ՀՐԷՇՆԵՐ

ՈՒԹՈՏՆԵԱՆԵՐ (Բխթաբօթ)

Ժիլիաթ անօթութենէ կը մեռնէր. երբ ծովին ջուրերը տեղատուութեամբ քաշուելով ծովային քարայրի մը մուտքը բացին՝ թշուառը հոն մտաւ խեչափառի մը ետեւէն: Զուրէն վեր՝ կրանիթին մէջ հորիզոնական ճեղք մը կայ, խեչափառը հոն փախած ըլլալու է, ժիլիաթ ձեռքը մէջը խօթեց:

Յանկարծ զգաց որ բազուկը կը բռնեն: Ի՛նչ որ զգաց այս վայրկեանին՝ նկարագրելը սոսկալի է:

Նուրբ, կարծր, տափակ բան մը. պաղ, կպչուն ու կենդանի՝ խաւարին մէջ կը պըլլուէր մերկ բազուկին վրայ, և դէպի կուրծքը կը բարձրանար՝ փոկի մը պէս սեղմելով, պտուտակի մը պէս ոլորելով: Երկվայրկեանի մը մէջ չգիտես ի՛նչ ոլորքով մը թեւէն ու բազուկէն անցաւ եւ ուսին դպաւ:

Ժիլիաթ ետ նետուիլ ուզեց՝ բայց հազիւ կրցաւ շարժիլ. կարծես՝ գամուած էր: Զախ ձեռքն առաւ ակունքներուն մէջ սեղմած դանակը և յուսահատ ճիգով մը ժայռին կրթնեցաւ բազուկը ազատելու համար: Հազիւ թէ կրցաւ թուցնել կապը որ նորէն սեղմուեցաւ՝ փոկի պէս կակուղ, պողպատի պէս ամուր, մարմարի պէս պաղ:

Երկրորդ ճիւղ մը, սուր ու նեղ, ժայռին ճեղքին մէջէն դուրս ելաւ՝ նման երախտ մը ելած լեզուի, սարսափիչ կերպով մը ժիլիաթի մերկ իրանը լզեց, և յանկարծ երկնալով մորթին փակչեցաւ ու բոլոր մարմինը պատեց: Միեւնոյն ժամանակ անշուր, անբաղդատելի տանջանք մը ժիլիաթի կրծք-

կած ջիղերը կը սարսռացնէր. մորթին մէջը սոսկալի խիթեր կ'զգար, կարծես հազարաւոր բերաններ՝ մսին փակած, արիւնը խմել կ'ուզէին:

Երրորդ փուկ մը ծածանեցաւ ժայռէն դուրս, ժիլիաթը շօշափեց և կողերուն փակաւ: Երբ տաքնապը ծայրագոյն աստիճանին կը հասնի, մունջ կը մնայ: Ժիլիաթ ծայն մը իսկ չհանեց. բաւական յոյս կ'ընէր արդէն տեսնելու համար վրան փակած զըզուելի բաները: Զորրորդ կապ մը՝ նետի պէս արագ՝ փորին շուրջը պատատուեցաւ:

Անկարելի էր կտրել կամ քակել կաշուն փոկերը որոնք հազարաւոր կէտերով ժիլիաթի մարմինին փակած էին. այս կէտերուն ամէն մէկը տեսակ մը սոսկալի ցաւի կեդ-



րոնն էր. միլիոնաւոր բերաններէ լափուիլ ըսել էր:

Հինգերորդ ճիւղ մըն ալ ելաւ ծակէն, առաջիններուն վրայէն անցաւ և ժիլիաթի կուրծքին փակաւ: Սեղմումը կ'աւելնար հետզհետէ և անձկութիւնը կը տիրէր. հազիւ թէ ժիլիաթ կը շնչէր:

Այս պարաններու ծայրերը սուր էին, և երթալով կը լայննային դանակի մը շեղբին պէս. անշուշտ բոլոր հինգն ալ մէկ կեդրոնի մը կը պատկանէին. ժիլիաթի մարմնոյն վրայ կը սողային ու կը քալէին. թշուառը կ'զգար որ բերան կարծած խաւարային ճնշումները տեղ կը փոխեն:

Յանկարծ կաշուն բան մը, կտր ու տափակ, ճեղքուածքին տակէն դուրս ելաւ: Ահա՛ այս էր կեդրոնը. հինգ փոկերն անոր կապուած էին շառաւիղներու պէս. այս զըզուելի տափակ սկուտեղին կռնակի կողմը կը աեսնուէր երեք բազուկներուն ծայրերն որոնք ժայռին խորը կը մնային: Այս կաշուն բանին կեդրոնը երկու աչքեր կային որոնք կը նայէին:

Այս աչքերը ժիլիաթը կը տեսնէին:

Ժիլիաթ ճանջաւ պողիպտու:

(Վ. ՀԻԿԾ, Ծովու Առխաւսաւոբ)

Պատմութեան մնացեալը սոսկալի է, կ'արժէ նոյն իսկ հեղինակը կարդալ: Այս յուզիչ պատմութիւնը մէկէն ի մէկ ժողովրդականացուց կենդանիներու դասակարգ մը որ անձանթ էր շատերուն: Այս դասակարգն է գլխաւոր կակղամորթ երունը:

Բ.

Երեւակայեցէք դնդերաշատ տոպրակ մը, թանձր, թուրիկ, կաշուն, գնդաձեւ՝ գլանաձեւ և կամ իրաձեւ ու քամէլէնի պէս փոփոխական գոյներով:

Մէջը դրէք ջրային շնչառութեան, արեան շրջանի յատուկ գործարան մը, մարսողութեան խողովակ մը ու թռչուններուն քարճիկին նման ստամոքս մը:

Այս տոպրակին վրայ դրէք կտր գլուխ մը երկու կողմնակի աչքերով որոց մէջտեղ կը բացուի խողովակ մը՝ իրր սրբան:

Գլխուն գագաթին վրայ գետեղեցէք բերան մը երկու եղջերաձեւ (թութակի կըսուցի նման) ծամելիքներով, որոց մէջը կայ սուր փուշերով ծածկուած լեզու մը:

Վերջապէս այս բերնին բոլորտիքը շարեցէք մսէ գործարաններու պսակ մը, ճրկուն, ուժեղ, շատ անգամ մարմինէն աւելի երկայն և դուրսի երեսն երկու կարգ ձողներով ծածկուած:

Մօտ ի մօտոյ գաղափար մը կ'ունենաք գլխոտներու վրայ. այս անունը Բիւվիէ տուած է, որովհետեւ ոտքերնին գլուխնուն վրայ դրուած է:

Գլխոտները բարձր կարգի կակղամորթեր են: Մարսողութեան խողովակին շուրջը հա-

ւաքուած է ջիղերու խումբ մը որոնք գըլ-
խուն մէջ իրար միանալու կը ձգտին (ինչ որ
այս կենդանիները կը նմանեցնէ ողնայա-
րաւոր կենդանիներու)։ Գրեթէ անշան ու-
ղեղ մը ունի՝ պաշտպանուած կռճիկէ պատ-
եանէ մը, որու վրայ կը ժողուուն գլխա-
ւոր մկաններն. արեան շրջանը ձուկերուն
կը նմանի. շատերուն աչքերը խիստ խոշոր
են ողնայարաւորներունին պէս։ Այս յատկա-
նիշերը առաջին կարգը կուտան անոնց՝ կակ-
ղամորթերուն մէջ. արդէն իրենց սերունդը
ամենահին ժամանակներէ ի վեր ծանօթ էր։

Այս կենդանիներուն բոլորն ալ ծովային
ու մսակեր են. ոմանք ծովուն խորերը
կ'ապրին, ուրիշներ՝ եզերքներէն չեն զատ-
ուիր։ Միջերկրականի ծովեզերքները լեցուն
են։ Խեչափառներ ու ձուկեր կ'ուտեն մեծ
քանակութեամբ՝ իրենց բնակած խոռոչնե-
րուն շուրջը խոնուած է կենդանիներու մը-
նացորդներով։ Այս կենդանիները կրկնա-
պէս փնասակար են ձկնորսներուն. ձուկերը
կը վախցնեն եզերքներէն եւ նոյն իսկ ձրկ-
նորսներն ալ կը վախցնեն. ասոր փոխարէն
զանոնք կ'ուտեն. խեղճուկ վրէժ մըն է ա-
սիկա որովհետեւ միսը շատ անախորժ է։

Կ'ուզէ՞ք որ գլխոտնի մը ինչպէս սողա-
լը, որսալը հասկնաք, քիչ մը առաջ տըր-
ուած պատկերը շրջեցէ՞ք մտքերնուդ մէջէն,
բերանը ուղղահայեաց բացուած, գլուխը
վար, բազուկները տարածուած. ահա գըլ-
խոտնը։ Ամէնքն ալ քալած ժամանակին
բազուկներն հողին կը կրթնցնեն. զոհը՝ կաշ-
կանդուած ու սեղմեալ՝ շուտով կ'զգայ թու-
թակի կտուցին խածուածքները։ Շատ ու
շատ մարդիկներ այս տանջանքը կրած են։
Արշիպեղաքոսի ծովեզերքը՝ ծովու բազնիք
մտնողները շատ վտանգներ կ'անցունեն։
Բոլինեգիայի կղզիներուն մէջ սուզակներուն
ահն ու սարսափին է ասիկա։ Այս դազան-
ներուն մէջ խիստ մեծերն ալ կան։ Միջերկ-
րականիները մինչեւ մէկ կանդուն կ'ըլլան։

Թարգմ. ՉԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԱՆ

(Շար.)



ՓՈՒՅՐԻԿ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԻՋՔԷՆ ՄԻՆԶԵԻ ՄԵՐ ՕՐԵՐ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գ Լ Ո Ւ Խ Բ.

ՉԻՆԵՐՆ ԵՒ ՄՈՆՂՈՂՆԵՐԸ

(Շար. Չրդ քիւհն)

Այս իշխաններն էին որք (1840) Անդ-
ղիացուց դէմ մղեցին աֆիոնի պատերազմը,
որուն հետեւանքն եղաւ օտար վաճառակա-
նութեան առջեւ հինգ նաւահանդիստներու
բացումը, եւ (1860) նոյնպէս այս տիրապետ-
ներն էին որ Յրանաական եւ Անգղիական
միացեալ բանակներուն դէմ զնեղով մղեցին
երկրորդ պատերազմ մը որ վերջացաւ Բա-
լիքաօր յաղթանակովն ու Բէքինի առմամբ։

Ուրեմն Դեզին ցեղն իր յարուցած պա-
տերազմաշունչ մեծամեծ աղմուկներով դը-
ղրդեց աշխարհն այն այլ եւ այլ նշանաւոր
աշխարհակալութիւններով, զոր ըրին Հոնք,
Ճինկիզխան, Թիմուրէնկ, ու այս ցեղ հաս-
տատեց Չինաստանի մէջ ազգութիւն մը, որ
յիսուն դարերէ ի վեր կը պահէ ու կը պաշտ-
պանէ իր գոյութիւն։

Կոնֆիլկիոս եւ իր հասարակ չինական
ազգային կազմակերպութիւնը. — Ղունկ-Չեւ
կամ Կոմփիլիոս, որուն գիրքերը Չինացիք
պարտաւոր են սորվիլ գրագիտական աս-
տիճաններու եւ հանրային պաշտօններու
հասնելու համար, օրէնսդիր մը չէր, բայց
սորվեցուց իմաստութիւնը։ «Շատ պարզ է,
ըսաւ, մեր իմաստուններուն բարոյականը.
որ է ուշադիր ըլլալ երեք հիմնական պատ-
ւիրաններուն որք կը սահմանադրեն իշխա-
նին ու հպատակներուն, հօրն ու զաւակ-
ներուն, առն եւ կնոջ իրարու հետ ունե-
ցած յարաբերութիւններն եւ գործադրել
երեք գլխաւոր առաքինութիւններն, որոնք
են մարդասիրութիւնը, այսինքն տիեզերա-
կան գթասիրութիւնն. — արդարութիւնը,
որ մէն մի անհատի կը հատուցանէ ինչ որ
պարտ է. — կրօնական ծեսերու, արարո-

ղութեանց, հաստատեալ սովորութեանց համա-
կերպիլը. որպէս զի ընկերութիւնը բաղկա-
ցընող մարդիկ ունենան ապրելու միեւնոյն
կերպը. — ուղղամտութիւնը, մտքի ու սրտի
այն ճշմարտասիրութիւնը որ ամէն բանի մէջ
ճշմարտը կը փնտռէ. անկեղծութիւնն ու
բարեմտութիւնը, որ թէ՛ վարքին, թէ՛ խօսքին
մէջ խաբեպատիր բան չ'ունենար:

Ուրիշ տեղ մը կ'ըսէ. « Երկինքն է տիե-
զերական սկիզբը, բոլոր իրաց արգասա-
բուղի աղբիւրն, անորմէն բղխած նախ-
նիքներն իրենցմէ ետքն եկող սերունդնե-
րու աղբիւրն եղած են: Իր երախտագիտու-
թիւնն երկինքին մատուցանելը մարդուն
առաջին պարտքն է. իսկ երկրորդ պարտքն
է նախնիքներուն երախտագէտ լինիլ »:

Այսպէս կրօնքն ու կառավարութիւնն



ԿՈՆՓԻԿԻՈՍ

Հիմնեալ են որդիական բարեպաշտութեան
վրայ, կը պատուեն երկինքն՝ իբրեւ էակ-
ներուն հեղինակ, եւ « Երկինքի զաւակ »
կայսրը՝ իբրեւ ազգին հայր: Այս ջերմե-
ռանդ զգացման շնորհիւ՝ քսաներկու իշ-
խանական ցեղապետութեանց դիմացաւ, եւ
կրնայ մեզ ըսել. « Մենք նախանձելիք բան
մը չունինք, ո՛չ ձեր օգտակար արհեստնե-
րուն, ո՛չ ձեր երկրագործութեան, ո՛չ ձեր
ճարտարագործութեան համար: Մենք ու-
նինք գրականութիւն մը որ չորս հազար
տարուան հնութիւն ունի: Մենք ձեզմէ ա-
ռաջ կը ճանչնայինք տպագրութիւնն եւ
կողմնացոյցը: Բէքինի մէջ եղած կարգ մը
փոփոխութիւններուն հակառակ, արշա-
ւանքներու տակնուվրայութեանց մէջ, մենք
պահպանեցինք մեր ընկերական կարգն ու

սարքը, եւ յարդեցինք Պետութիւնը, որով-
հետեւ մենք կը յարգենք ընտանիքը: »

Այս երկրին մէջ, ո՛չ կղերականութիւն
եւ ո՛չ ազնուապետականութիւնը ժողովուր-
դին վրայ տիրապետող չէ: Ամէն գարնան,
կայսրը՝ երկրագործութիւնն ու աշխատու-
թիւնը պատուելու համար, ինքն անձամբ
անձին ակօս մը կը բանայ: Հոս պաշտօններն
ու պատուանշաններն արժանաւորին ու գիտ-
նականին կ'ընծայուին: Եւ այսու ամենայ-
նիւ, որովհետեւ Չինացիները, ճիշդը խօ-
սելով, չ'ունին ո՛չ կրօնք, ո՛չ արուեստ,
այսինքն իտէպլ երբէք, մտքի միջակու-
թեան մէջ մնացած են: Իրենց ճարտարա-
պետութիւն թէեւ շատ քիչ նրբաճաշակ,
բայց առանց մեծ վայելչութեան: Նկար-
չութեան ու քանդակագործութեան մէջ,
անոնք կը նախամեծարեն տգեղն ու այ-
լանդակը: Իրենց գիւղանկարչութեան մէջ
չ'ունին հեռահայեաց բաղդատակէտը. իրենց
պատկերանկարներուն մէջն աւելի ցանկու-
թիւն, կիրք գրգռող քան զգացում կամ
գաղափար: Չինաստան աւելի եւ ամէն բա-
նէ առաջ իր պէտքերովն ու հաճոյքներով
դրաղած աշխարհի չընծայեց բան մը:

Գ Լ Ո Ւ Թ Գ

Հ Ն Դ Կ Ա Ս Տ Ա Ն

Նախնական բնակիչներ. Արիաններ. Վե-
սաններ. — Հնդկաստան՝ Ինդոսի եւ Գանգէսի
(Հինտուստան) հովիտներէն եւ Տէքանի թե-
րակղզիէն կազմուած է. իր նախկին բնա-
կիչներն եղան սեւ ցեղի ժողովուրդներ,
յետոյ՝ Մոնկոլեան մէկ ցեղաճիւղն եղող
Տուրանեաններ, աւելի վերջ՝ գորշամորթ ու
կարմրամորթ մարդեր, վերջապէս Արիան-
ները որ տուին անոր՝ իր պատմական դերը:

Այս Արիաններ՝ Հինտուքուշի (Բակտրիա,
Սոկտիանա) հովիտներուն մէջ հաստատուած
խիստ բազմաթիւ ճերմակ ցեղի ժողովուրդոց
մէկ մասը կը կազմէին: Այս լեռնադաշտէն
յորդեցին չորս ուղղութեամբ եւ զանազան
ժամանակներու մէջ մարդոց հոսանքներ,
որք ողողեցին Ասիան, Հնդկաստան եւ աւ-
բողջ Եւրոպա: Ի՛նչպիսի արեւմուտք՝ Պեղապ-
լները, Յաօնները (Յոնիացիները) եւ Կեղ-

տերը՝ Փոքր Ասիայի մէջ, Յունաստան, Իտալի եւ Կալիա (Gaulle)։ Դէպ հիւսիս արեւմուտք՝ Իրանեանները՝ Մարաստանի եւ Պարսկաստանի մէջ. Դէպ հիւսիս արեւմուտք Գերմաններն եւ Սլաւները՝ Ուրալեան լեռներէն մինչեւ Հոնոնս. Դէպ հարաւ-արեւելք՝ Արիանները որք կտրեցին անցան Ինդոսը եւ տիրեցին Հինգ Գետաց (Բէնճապ) երկրին։ Արիաններու այս աշխարհակալութեան պատճառաւ մզուած կուոյն յիշատակը պահուած է վետա կոչուած իրենց սուրբ գրքին մէջ, որ ճերմակ ցեղին գրի առնուած յեշտակարաններու ամէնէն աւելի հինն է։

(Շար)



ԳԼՕՄՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ



ԳԼՈՒԽ Ա.

ՅՈՅՆԵՐԸ

ՍՊԱՐՏԱ, ԼԻԳՈՒՐԿՈՍ

Յոյները. — Դպրոցի դաստիարակութեան տեսակէտով գրուելուն համար հարկ էր նախ սա հարցումներն ընել. Յոյներու մէջ զըպրոցներ կային. ի՞նչ կազմակերպութիւն ունէին, հոն ի՞նչ կը սորվեցնէին, ի՞նչ մէթոտներու կը հետեւէին,

Ստոյգ է թէ Յունաստանի մէջ կային դպրոցներ, ստոյգ է նաեւ թէ պատմական չըջանի մը մէջ յունական քաղաքը մանուկներու դաստիարակութեան մասին մեծ հոգ կը տանէր, որովհետեւ նշանաւոր կրթախօս մատենագիր Ֆիլսոֆէլ տը Գուլանթի Հնագիտական Փաղափ անուն Գրքին մէջ կը կարդանք հետեւեալ տողերը, որք այս մասին ամէն տարակոյս կը փարատեն. Հարկ էր որ Յունաց մէջ դաստիարակութիւնն ազատ ըլլար. Ընդհակառակը քաղաքն ամէն

բանի տէրն ինք էր. Սպարտաի մէջ հայր մը երբէք իշխանութիւն չունէր իր զաւկին կրթութեանը վրայ. Աթէնքի մէջ օրէնքը նուազ խիստ եղած ըլլալու է. Քաղաքը այնպէս մը կը կարգադրէր որ կրթութիւնը հասարակաց ըլլայ իր կողմանէ ընտրուած դաստիարակներու ձեռք. Արիստոփան պերճախօս հատուածի մը մէջ կը յիշատակէ թէ Աթէնքի տղաքները դպրոց կ'երթան կարգով, խումբ խումբ բաժնուած. կը քալեն սեղմեալ կարգերով անձրեւին, ձիւնին կամ բաց արեւին տակ, այս տղաքներն արդէն կը հասկցնէին թէ քաղաքացիական պարտաւորութիւն մ'է իրենց կատարածը. Տէրութիւնն ինք միայնակ կ'ուզէր վարել դաստիարակութիւնն, եւ Պղատոն այս պահանջման շարժառիթը կը բացատրէ. « Սընողներն ազատ ըլլալու էին իրենց տղաքները քաղաքին ընտրած վարպետներուն քով զրկելու կա՛ չիղրկելու. վասնզի տղաքներն իրենց ծնողքէն աւելի քաղաքին կը վերաբերին »։ Տէրութիւնն այնպէս կը նկատէր թէ իւրաքանչիւր քաղաքացիին մարմինն ու հոգին քաղաքին կը վերաբերին. ասոր համար կ'ուզէր որ այս մարմինն ու գըլուխն այնպէս մը կրթէր որ անկէ օգուտ քաղէ. կը սորվեցնէր մարմնամարզութիւն, որովհետեւ մարդուն մարմինը քաղաքին համար զէնք մ'էր, եւ պէտք էր որ կարելի եղածին չափ զօրաւոր ու լաւ գործածելի ըլլար. կը սորվեցնէր նաեւ կրօնական երգեր, աստուածներու օրհներգութիւններ, նուիրական պարեր. այս ծանօթութիւնն հարկաւոր էր զոհագործութեան պաշտօններն եւ քաղաքին տօները լաւ կատարելու համար »։

« Տէրութիւնն իրաւունք ունէր հաստատելու ո՛ր եւ է ազատ ու մասնաւոր դաստիարակութիւն մը. Աթէնք'որ մը օրէնք դրաւ որ տղաքներն առանց երկրին նախարարներու արտօնութեան չի կրթուին, եւ ուրիշ օրէնք մ'ալ դրաւ որով կ'արգելուր փիլիսոփայութիւն սորվեցնելը »։

Բոլոր տղայոց համար հասարակաց կըրթութիւն մը տալու դադափարն ամէն յունական քաղաքներու համար ընդհանուր կ'երեւի. Սակայն ատեն մը այս օրէնքը թուլցած ըլլալու է, զի Արիստոտէլ հանրային կրթութեան այս դադափարին վրայ

խօսելով, կ'ըսէ, իր Քաղաքականութիւնն անուն գրքին Ըրդ հատորին մէջ. « Ինչպէս կայ նպատակ մը, վախճան մը որ մի եւնոյնն է բոլոր քաղաքացիական ընկերութեան համար, հետեւաբար դաստիարակութիւնն ալ մէկ ըլլալու է, և ընկերութեան բոլոր անդամներուն համար ալ նոյնը. և թէ անոր ուղղութիւնն ալ՝ հասարակաց, և ո՛չ թէ ամէն մէկ մասնաւորի կամքին թողում ինչպէս որ մեր օրերն ի գործ կը դնեն, ուր իւրաքանչիւրն ինք կը հոգայ ու կը վարէ իր գաւառներ, և առանձինն իրեն յարմար դատած մասնաւոր կրթութիւնը կուտայ անոնց. մինչդեռ հասարակաց շահերուն կապում իրերու ծանօթութիւնն և ուսուցումը հասարակաց ըլլալու է » :

Արիստոտէլի այս խօսքերուն և Ֆիւսդէլ տը Գուլանթի խօսքերուն մէջ հակասութիւն մը կ'երեւի: Այս հակասութիւն որքան յայտնի այնքան և իրական է:

Յոյները, Հռովմայեցիներն և արիական ցեղին բոլոր ժողովուրդները միեւնոյն ընկերական կազմակերպութեան ձեւն ունին, եւ բոլոր ընկերական կազմակերպութեան հիմը ընտանիքին կրօնական հոռատալիքներն են. այս ժողովուրդներու նախնական պատմութեան ուշադիր ուսումնասիրումը կը ցցունէ թէ՛ ի սկզբան ամէն ընտանիք կղզիացած՝ դատ դատ ապրեցաւ, աստուածներու տեղ իրենց նախահայրերը կը դնէին, իրենց ընտանեկան վառարանը կամ տունը՝ իրենց խորանն էր, ընտանիքին հայրը՝ քահանան ու գերագոյն նախարարը: Պատմական այս շրջանին մէջ կրթիչը միմիայն հայրը կրնար ըլլալ, ընտանիքին մէջ ամէն բան բացարձակօրէն անոր գերիշխանութենէն կախում ունէր, ուրիշ օտար մը չէր կրնար իր դաւաններուն կրթողն ըլլալ: Երբ քաղաքը կազմակերպուեցաւ, ինքն ալ ունեցաւ իր հասարակաց աստուածները, հասարակաց բարոյական մը, հասարակաց օրէնք մը, քահանայապետներ և իշխաններ որոնք քաղաքին բարոյական, իմացական և նիւթական ուղղութիւնն ու վարչութիւնն ուսանանքին: Տղան, քաղաքացին բոլորովին քաղաքին վերաբերեցան ճիշդ ինչպէս որ անցեալ ժամանակներու մէջ ընտանիքի մը բոլոր անդամները կը վերաբերէին նոյն ընտանիքի խումբին: Քաղաքացիական պարտա-

ւորիչ դպրոցն՝ յայտնի է թէ այս թուականէն կ'սկսի. Աստուածներն էին մանաւանդ քաղաքին տէրերը և անոնց իշխանութենէն բան մը չէր կրնար խուսափիլ: Աստուածութեան գաղափարը հետզհետէ աւելի տարածուեցաւ, ընտանիքի յարկին աստուածներուն, քաղաքի աստուածներուն վրայ աւելցան աշխարհքը կառավարող, ստեղծող, ամենակարող աստուածներ. և տեղական աստուածներու խիստ ու անձուկ զօրութիւնը քիչ քիչ նուազելով՝ մարդն ինքզինքն աւելի ազատ գդաց, և քաղաքին հասարակաց դպրոցը տակաւ առ տակաւ յարգուիլ սկսաւ: Յայտնի է թէ այն թուականին, իրաց այս նոր կարգին դէմ է որ կը խօսի Արիստոտէլ: Քաղաքին այս դպրոցի կազմակերպութեան վրայ լուսաբանող բան մը չկայ. կրթական ծրագիրներու մասին չատքիչ բան մնացած է: Բայց յոյն մանկավարժներուն վրայ ըլլալիք ուսումնասիրութիւն մը մեզ ցուցնելով այն ընթացքը որ ունեցաւ դաստիարակութիւնն Յունաստանի մէջ, բաւական պայծառ լոյս մը կուտայ մեզի, որոշ դատաստան մը ընելու համար: Յունական մանկավարժութիւնը՝ աւելի լաւ է ըսել՝ ինչ որ գիտենք յունական մանկավարժութեան վերաբերմամբ, ամբողջովին կը դառնուի Լիկուրգոսի օրինաց մէջ, Սոկրատէն, Քոնենոփոնէն, Պղատոնէն, Արիստոտէլէն և Պլուտարքոսէն յիշատակուածներուն մէջ:

[Շար.]



Փոքրիկ Լուիզի կոկորդը կը ցաւի: Բժիշկը կը հրամայէ իբեկա խմցունել:

— Սասուած իմ, ինչ թթու է, կը պօռայ փոքրիկը, անդին հրելով գաւաթը:

— Նայէ՛, կ'ըսէ հայրիկը, ես կաթիլ մը պիտի խմեմ:

Եւ Լուիզ անուշ փայփայանքով.

— Կաթիլ մը մի՛ խմեր, հայրիկ... ամէնքն ալ խմէ:



ԴԻՑԱԿԱՆ ՎԷՊ

ԺԻՒՆ ՎԵՐՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ՎԵՐՈՆԸ

(Շարունակութիւն Ձրդ քիւեց)

Շիրտակը, ես ալ բան մը չէի հասկնար որ իրեն ըսէի, թէ եւ բնաւ կարծիքս չհարցուց և ինքնիրեն խօսիլը շարունակեց:

«Ասիկա ծածկագիրը ըսածնիս է, որու մէջ գիրերը օրէնքի մը համեմատ շարունած են, բայց խառնափնթոր կ'երեւին. եթէ կարգի գրուին, անշուշտ խմատ մը կուտան: Երբ կը մտածեմ թէ գուցէ ատոր մէջ նշանաւոր գիւտի մը վրայ ծանօթութիւն տրուած է...»:

Ես կը մտածէի թէ բան մըն ալ չիկայ ատոր տակը, բայց կարծիքս ինծի պահելու խոհեմութիւնն ունեցայ: Վարպետը՝ գիրքն ու մագաղաթը առաւ ու սկսաւ իրարու հետ բաղդատել:

«Այս երկու գրութիւնները միեւնոյն ձեւքէ ելած չեն, ըսաւ, ծածկագիրը գիրքէն ետքը գրուած է, և ահա առաջին ապացոյցը: Առաջին գիրը գոյգ Մ է. ինչ որ չենք կրնար գտնալ թիւրէլունի գրքին մէջ, որովհետեւ 14րդ դարուն միայն այդ գիրը իսլանտական սլոնթերներն վրայ աւելցաւ: Այսպէսով գրքին ու յիշատակագրին մէջտեղը երկու հարկւր տարի անցած է»:

Ասիկա տրամաբանական էր, ըսելիք չիկար: «Ասկէ կը հետեւցնեմ թէ, շարունակեց հօրեղբայրս, այս գրքին մէկ տէրը դրած է այդ ծածկագիր տառերը. բայց ո՞վ էր այդ տէրը: Արդեօք անունը դրած չ'է ձեռագրին մէկ անկիւնը»:

Հօրեղբայրս ակնոցները հանեց, զօրաւոր խոշորացոյց մը առաւ, և սկսաւ քննել գրքին առաջին երեսները: Երկրորդ թեր-

թին կռնակը, այսինքն նախադուռին ետին՝ մեղանի բիծի պէս բան մը կար, որ մօտէն նայուելով կէս աւրուած գիրեր կը ցուցնէր, հօրեղբայրս հասկցաւ որ շահագրգիռ կէտը հոտ էր, ուստի բոլոր ոյժը կեդրոնացուց և խոշորացոյցին օգնութեամբ կարողացաւ կարգաւ Ռունական սոյն բառերը:

1ԱԽԻ ԿԻՄԻՆԿԿԻՋ

«Արն Սաքնիւսէմ, գոչեց յաղթական, ասիկա իսլանտական անուն մըն է, տասնըվեցերորդ դարու գիտունի մը անունը, նշանաւոր ալքիմիսդի մը անունը»:

Տեսակ մը սքանչացումով հօրեղբորս կը նայէի: «Այս ալքիմիսդները, ըսաւ, Սիէսէն, Պաքօն, Լիւլ, Բարասէլա իրենց ժամանակին միակ ու նշանաւոր գիտուններն էին: Անանի գիւտերը ըրած են որոց վրայ մենք իսկ կը վարմանանք: Ինչո՞ւ չի մտածեմ թէ Սաքնիւսէմ անակնկալ գիւտ մը չէ ծածկած այս անհայտալի յիշատակագրին մէջ: Աս ասանկ պէտք է ըլլայ, եւ այնպէս ալ է»:

Ուսուցչապետին երեակայութիւնը կ'ոգեւորէր այս ենթադրութեամբ:

«Անշուշտ իրաւ է այդ, համարձակեցայ պատասխանել. բայց ինչ շահ կրնայ ունենալ գիտունը՝ իր ըրած գիւտը ծածկելով»:

— Ինչո՞ւ համար, ինչո՞ւ համար: Ես ի՞նչ գիտնամ: Կալիլէոս ալ նոյնը չըրա՞ւ Երեւակի համար: Հիմա կը տեսնանք, յիշատակագրին դադտնիքը պիտի հասկնամ, և անկէ առաջ ո՛չ պիտի պառկիմ. ո՛չ կերակուր ուտեմ:

— Օհօ՛. մտածեցի ինքնին:

— Ո՛չ ալ դուն, Աքսէլ, յարեց:

— Սատանայ, մտածեցի, աղէկ որ երկու անգամի համար ճաշ մը ըրի:

— Ամէնէն առաջ սոյն «պիտակին» լեզուն պէտք է գտնանք. ասիկա դժուար չէ»:

Այս խօսքերուն վրայ գլուխս վերցուցի. հօրեղբայրս շարունակեց մենախօսութիւնը:

«Ասկէ դիւրին բան չկայ: Յիշատակագիրը 132 գիր կը պարունակէ, որոց 79ը բազմաշն է, իսկ 53ը ծայրահաս: Արդ, գրեթէ միեւնոյն համեմատութեամբ է որ հարաւային լեզուները կազմուած են, մինչդեռ

հիւսիսային բարբառներու մէջ բաղաձայները շատ աւելի են: Ուրեմն հարաւային լեզուով գրուածք մըն է սա»:

Այս հետեւութիւնները շատ ճիշդ էին:
« Բայց ո՞րն է այդ լեզուն »:

Այս կէտին վրայ է որ պիտի փորձուէր գիտնականս, որու քով խորաքնին վերլուծումի կարողութիւն մը կար:

« Այս Սաքնիւսէմը չարունակեց, ուսեալ

գիտունները ընդհանրապէս լատիներէն կը գրէին. ուրեմն ըստ նախագուռնի լատիներէն է »:

Աթուիս վրայէն վեր ցատքեցի. լատինագէտի յիշատակներս կը մերժէին ընդունիլ թէ ասանկ անկապակից ու անճանաչելի բառեր Վիրգիլիոսի քաղցր լեզուին վերաբերին:

« Այո՛, լատիներէն, կրկնեց հօրեղ-



Արսէլ ծխամուրճէն ելած մօտը կը դիտէր

մէկն էր, արդ քանի որ իր մայրենի լեզուաւ չէր գրեր, ուրեմն տասնըվեցերորդ դարու գիտուններուն ընթացիկ լեզուն պիտի գործածէր, այդ է լատիներէնը: Եթէ կը սխալիմ, վերջէն կրնանք փորձել սպաներէնը, ֆրանսերէնն, իտալերէնն, յունարէնն, եբրայեցերէնը: Բայց ժՁ, դարու

բայրս, բայց խառնակուած:

— Սա՛նկ ըսէ, մտածեցի. եւ եթէ կարենաս քակել, հօրեղբա՛յր, շիտակը վարպետ մարդ մը կ'ըլլաս:

— Աղէկ քննենք, ըսաւ ձեռքէս թուղթն առնելով: Ահա 132 գրերու շարք մը որոնք ակներեւ անկարգութեամբ մը շարուած են,

Բառեր կան ուր բաղաձայնները չատ են, ուրիշներ ալ՝ ուր ձայնաւորները գրեթէ մեծամասնութիւն կը կազմեն. ուրեմն այս կարգը բաղադրուած չէ, այլ չափադիտարար դրուած է անծանօթ կանոնի մը համաձայն: Ինծի այնպէս կ'երեւայ որ առաջ նախադասութիւնը շիտակ գրուած էր, յետոյ որոշ օրէնքի մը հետեւելով դարձուած է. արդ, խնդիրը այդ օրէնքը գտնելն է: Ո՛վ որ այս պիտակին բանալին ունի, շուտով պիտի կարգայ. բայց ի՞նչ է այդ բանալին: Ա.քսէլ, գիտե՞ս արդեօք այդ բանալին »:

Այս հարցումին չպատասխանեցի, և ոչ առանց պատճառի: Աչքերս պատէն կախուած կրախաւէնի մէկ սքանչելի կենդանագրին հանդիպեցան: Այն ժամանակ հօրեղբօրս սանուհին Ալթօնա կը գտնուէր, աղագականի մը տունը, եւ իր բացակայութիւնը զիս շատ կը տխրեցնէր, որովհետեւ, հիմակ կրնամ ըսել, երկտասարդ Վիրլանտուհին ու դասախօսին եղբորորդին գիրար կը սիրէին գերմանական ամբողջ համբերութեամբ ու հանդարտութեամբ: Արդէն նըշանուած էինք առանց հօրեղբօրս գիտութեան, որ իր երկրարանական գիտութենէն դուրս՝ ասանկ զգացումներէ չէր հասկընար: Կրախաւէն սիրուն երկտասարդ խարտեաշուհի մըն էր, կապոյտ աչքերով, ծանրախոհ ու լուրջ կերպարանքով, որ զիս շատ կը սիրէր. ես ալ զայն կը պաշտէի՝ եթէ ասանկ բառ մը կայ գերմաներէն բառարանին մէջ: Գողտրիկ Վիրլանտուհիս պատկերը իրական աշխարհէն փոխադրեց զիս երազներու եւ յիշատակներու երկնքին մէջ: Աշխատութեանցս ու հաճոյքներուս հաւատարիմ ընկերուհին նորէն տեսայ:

Նէ ինծի կ'օգնէր ամէն օր կարգի դնելու հօրեղբօրս թանկագին խճաքարերը. Օրիորդ Կրախաւէն հմուտ հանքաբան մըն էր, քանի մը գիտուններ գրպանէն կը հանէր: Արդեօք քանի՞ քանի՞ ժամեր միասին ուսումնասիրած ենք այս քարերը որոց բաղդին արժանանալ կը ցանկայի՝ անոր փափուկ ձեռքերուն մէջ խաղալիկ մը դառնալու համար:

Յետոյ զբօսանքի ժամուն միասին դուրս կ'ելլէինք. Ալթէրի թուփերով ծածկուած ճամբաներէն կ'անցնէինք և լճին ծայրը գտնուած հին քաղաքը կ'երթայինք: Ծամբան

ձեռք ձեռքի կը խօսակցէինք. պատմութիւններ կ'ընէի. ան ալ կը խնդար: Ասանկով էլպայի եղերքը կը հասնէինք, հոն ճերմակ նունուֆարներուն մէջտեղ սպիտակ կարապներ կը լողային, անոնց բարխրիկուն կ'ըսէինք և շոգեմակոյթով ետ կը դառնայինք:

Արդ, երազիս այս կէտին հասած էի, երբ հօրեղբայրս սեղանին բռնցի հարուստ մը տալով, իրականութեան դարցայ:

«Տեսնենք, ըսաւ, խօսքի մը գիրքը իրար խառնելու համար մարդուս միտքը եկած առաջին միջոցն է հորիզոնական գրելու տեղ վերէն վար ուղղահայեք գրել:

— Իրաւ է մտածեցի,

— Տեսնենք ի՞նչ կ'ըլլայ ասոր արդիւնքը: Ա.քսէլ, սա թուղթին վրայ բան մը գրէ, բայց գիրքը իրարու քով գրելու տեղ տակէ տակ հինգական կամ վեցական շարէ»:

Ինչ ըսել ուզէին հասկցայ և գրեցի

Շ	u	f	ի	n	ի	u
ա	ի	ե	մ	ր	ւ	:
s	r	զ	ա	կ	պ	
կ	ե	ի	ղ	ր	ե	
ը	մ	,	ւ	ա	ն	

«Լա՛ւ, ըսաւ դասապետը առանց կարգալու, հիմա այս բառերը հորիզոնական կարգով շարէ »:

Հնազանդեցայ, և հետեւեալ նախադասութիւնը ստացայ:

Շսփիոյս աիեմու: srզակպ կեիդրե բմւան

«Շատ աղէկ, ըսաւ հօրեղբայրս՝ թուղթը ձեռքէս կորզելով ահա հին յիշատակագրի երեւոյթ ունեցող բան մը. ձայնաւոր ու բաղաձայն միեւնոյն անկարգութեան մէջ են, նոյն իսկ բառին մէջ զլիազոր ալ կայ, ինչպէս նաեւ ստորակէտ մը. ճիշդ Սաքնիւսէմի մագաղաթին պէս »:

Այն դիտողութիւնները շատ մտացի երեւցան ինծի:

«Արդ, ըսաւ հօրեղբայրս, խօսքը ինծի ուղղելով, գրած խօսքդ զոր չեմ գիտեր, կարդալու համար՝ նախ կ'առնեմ առաջին գիրքը բոլոր խօսքերուն մէջ, յետոյ երկրորդ գիրքը, յետոյ երրորդները, և այսպէս շարունակաբար »:

Եւ հօրեղբայրս ի մեծ զարմացում իրեն,
և մանաւանդ ինծի, կարդաց:

« Ես կը սիրեմ քեզի, իմ աղւոր Կրախապէս »:

« Հէ՛հ » ըրաւ հօրեղբայրս:

Այո՛, առանց ուշադրութիւն ընելու,
անձարալիկ սիրահարի մը պէս, փորձեալուոր
խօսքը գրած էի:

« Ա՛, Կրախապէսը կը սիրե՞ս, ըսաւ հօր-
եղբայրս խնամակալի մը անկեղծ ձայնովը:

— Այո՛... ո՛չ... թոթովեցի:

— Ա՛հ, Կրախապէսը կը սիրե՞ս, կրկնեց
մեքենաբար, լաւ ուրեմն, այս միջոցը ի
գործ դնենք յիշատակագրին համար ալ »:

Հօրեղբայրս մտաթիւր թաղուեցաւ իր
խնդրին մէջ՝ եւ շուտով մոռցաւ անխոհեմ
խօսքերս: Անխոհեմ կ'ըսեմ, որովհետեւ դի-
տուհի մը գլուխը՝ սրտի բաներէն չի հա-
կնար: Բարեբաղդաբար յիշատակագրին
գործը ամէն բան ծածկեց:

Գլխաւոր փորձը կատարած ժամանակ,
Լիտէնպրօքի աչքերէն կայծակներ կը ցա-
քէին, մասները կը դողային՝ երբ նորէն
ձեռք առաւ հին յիշատակագիրը: Ըջօրէն
յուզուած էր. վերջապէս, հազաց և ծանր
ձայնով մը նախ առաջին գիրերը, յետոյ
երկրորդները կարդաց. եւ ալ գրեցի այս
չարքը:

: մեւհնգաՍմբն:իցեհասակոչն՝իանկ:սինսա
հիսիպընդոդեկսիրկրն,գրոբմանգլոդնայ,եւ,ըրե
նգրիկսիսիւնոմրլոեիսիբաքաւՍյանի՝կրւոջհմ
նինարանուախլոսօխիսիֆեհնՍրիջի՝

Երբ լմնայ, յուզուած էի. մէկիկ մէկիկ
ըսուած այս գիրերէն բան մը չէի հասկցած,
կ'սպասէի որ դասախօսը լատիներէն նախա-
դասութիւն մը արտասանէր անխմանալի այս
տողանցումէն:

Բայց որո՛ւ մտքէն կ'անցնէր. բռունցքի
ահեղ հարուած մը սեղանը դղրդեց. մե-
լանը թափեցաւ, գրիչը ձեռքէս ցատեց:

« Ասիկա չէ՛ ուղածո, գոչեց հօրեղբայրս,
խելքի գէ՛մ է աս »:

Յետոյ աւմբի մը պէս սենեակէն անցաւ,
ձիւնակոյտի մը նման սանդուղներէն վար
գլորեցաւ և փողոցին մէջ անհետացաւ:

[Շար.]

ԶԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՈՒԽՏԱԻՈՐԸ

Ժամանակաւ Պետրոս անունով խեղճուկ
մարդ մը կար. ասիկա առաջ հոգիւ եղած էր
բայց ոչխարները մէկիկ մէկիկ մեռան, շունը
քոտոտեցաւ, ինք ալ աշխարհի մէջ մինակ
մնաց: Այս թշուառութեան մէջ վրան ծանր
հիւանդութիւն մը եկաւ. խնամելու համար
մէկը չունէր, ինք ալ չէր կրնար դռնէ դուռ
մուրալ հացը ճարելու համար, ուստի կտոր
մը յարդ ժողվեց, անկողինի պէս շտկեց և
մէջը պառկեցաւ: Սղը ցուրտ էր, անձրեք
անդադար կը վազէր, խեղճին անկողինն
ալ քարի պէս կարծր: Թշուառը որչափ որ
արգահատելի վիճակ մը ունէր, նորէն մեռ-
նիլ չէր ուզեր: « Սուրբ Պետրոս, խղճայ
վրաս, եթէ ուզես կրնաս ինծի ազատել այս
խեղճութենէն, եթէ աղէկնամ մինչեւ ե-
րուսաղէմ պիտի երթամ և անանկ մոմ մը
վառեմ ու դռն ալ հաւնիս »:

Ս. Պետրոս լսեց իր հաւատացեալին ա-
ղօթքին եւ աղէկցուց զանի:

Մուրացկանը անմիջապէս ճամբայ ինկաւ.
քալեց ու քալեց, բայց ի վերջոյ տապալին
ալ ստամոքսին պէս պարպուեցաւ և ստիպ-
ուեցաւ ճամբան պանդոկի մը դուռը գար-
նել: Դուրսը ցուրտ ու փութ էր, ձիւնը խո-
շոր խոշոր կը տեղար. պանդոկին մէջ ան-
շուշտ տաք կ'ընէ, վառարանին բոլորտիքը
հաւաքուողներուն խնդալու ձայնը դրսէն կը
լսուի՝ պնակի ու պատառաքաղի շխառու-
քին հետ:

« Դա՛ք. դա՛ք, դա՛ք » զարկաւ Պետրոս:
Պատասխան տուող չեղաւ: Աւելի ուժով
դարկաւ:

— Ո՞վ է ան, ըսաւ խիստ ձայն մը, որու
յաջորդեց խոշոր շան մը հաչիւնը:

— Խեղճ աղքատ մըն է. Աստուծոյ սի-
ւուն, Ս. Պետրոսի գլխուն համար, դուռը
բացէք, ցուրտէն կը մեռնիմ »:

Ձայնը չպատասխանեց, խնդուքներն ու
պնակի ձայները նորէն սկսան:

« Ըսածո չիմացան » մտածեց Պետրոս և
անդամ մ'ալ կրկնեց: Եղանը նորէն հաչել
սկսաւ. ձայնն ներսէն պատասխանեց, « ճամ-
բադ դնայ, մուրացկանի պէտք չունինք.
եթէ չհեռանաս այս տեղէն, շունը վրադ
կը խողովմ »:

Պետրոս ճամբայ ինկաւ՝ շատ մը դըռ-

ներու զարնելով. եւ ոչ մէկը բացուեցաւ :

Յուսահատ, սկսաւ քալել, մինչեւ որ հասաւ մեծ անտառի մը եզերքը : Տոպրակը շատ ծանր էր, որովհետեւ գտած հին ու մին բաները, ոսկորները մէջը կը նետէր, որպէս զի երբ Երուսաղէմ հասնի՝ ծախէ ու դրամը պահած քանի մը տասնոցին վրայ աւելցնելով խոտացած մոմը գնէ :

Մտած անտառը խիստ ընդարձակ էր, դարաւոր կաղնիներ սեւ կոճղերնին կը ցըցէին, չոր ճիւղերը կը ճարճատէին վայրի դաղաններու ոտքին տակ, բուերուն հանած ողոր բոլոր անտառը կը լեցնէր :

Պետրոս մինչեւ առտու քալեց, բայց երբ լոյսը ճեղքուեցաւ, տեսաւ որ կորուսած էր. ճամբու մը վրայէ չէր քալեր, հապա մացառներու մէջ. պարապ տեղը ճամբան վրէտուեց. խիտ ծառերը պատուար մը կը քաշէին առջին և քանի մը քայլ հեռուն տեսնելը անկարելի էր : Առջի առտունէն ի վեր բան կերած չէր. յուսահատութիւնը կը պաշարէր զինքը, երբ միտք ըրաւ նորէն Ս. Պետրոսի աղաչել :

« Շիտակը, կ'ըսէր, քառսուն սուրբի աղօթելու տեղ աւելի լաւ է մինակ Աստուծոյ աղաչել, բայց Ս. Պետրոս ալ նետուելիք բան չէ. դրախտին դուռ ան կը բանայ » : Հաղիւ թէ իր սուրբին աղօթքի քանի մը բառ միմուսներ էր՝ երբ մացառները բացուեցան և պատկառելի ծերունի մը երեւցաւ :

« Ինծի կանչեցիր, ըսաւ, ես Ս. Պետրոսն եմ, չեմ ուզեր որ արդարները արքայութեան դրան առջեւ երկար ատեն սպասեն, բայց հիմակուհիմայ մէկը չկայ ներս մտցնելիք : Խօսէ՛, ի՞նչ կ'ուզես :

— Ի՞նչ կ'ուզեմ, մեծդ Ս. Պետրոս, գոչեց խեղճ ուխտաւորը ծունգի դալով, ուղածս նախ քեզի շնորհակալ ըլլալ է որ ինծի աղէկցուցիր :

— Աղէ՛կ, ըսաւ Ս. Պետրոս շողքորթած :

— Յետոյ, աւելցուց մուրացիկը, ճամբաս գտնայի և աղէկ պանդոկ մը հասնէի, քիչ մը բան ուտելու համար :

— Ուղածդ այդ ըլլայ, ըսաւ Ս. Պետրոս, հետս եկու՛ր :

Սուրբին մէկ շարժումին վրայ, մացառներն ու ճիւղերը քաշուեցան, կաղնիներն անդամ մէկ կարգի վրայ եկան՝ բարեւ կե-

ցածի պէս և շիտակ ճամբայ մը երեւան ելաւ :

— Տե՛ս, սա մատիս ուղղութեամբ լոյս մը կայ, ըսաւ Ս. Պետրոս :

— Այո՛, պատասխանեց միւսը :

— Լա՛ւ, չիփ շիտակ քալէ մինչեւ այդ տեղը, և հոն պանդոկ մը պիտի գտնաս :

— Պանդոկ մը, մեծդ Ս. Պետրոս, բայց հոն՝ արեւին տակ փայլող ժայռ մը միայն կայ, ձգէ՛ որ հոն երթալու համար պէտք է թռչիմ, որովհետեւ ըսած լոյսդ ճահիճով մը չըջապատուած է :

— Իմ վրայ հաւատք ունի՛ս, հարցուց սուրբը :

— Հապա՛, ըսաւ ուխտաւորը համոզուած շեշտով մը :

— Լաւ ուրեմն, եթէ խօսքիս կը հաւատաս՝ չիփ շիտակ քալէ, դետը, մացառը, չեմ գիտեր ինչը հոգ չընելով, և պանդոկը պիտի գտնես :

— Կը հաւատամ քեզի և շնորհակալ եմ, ուղիղ ճամբով մինչեւ պանդոկը պիտի երթամ :

— Հիմա վրադ փարա մը չունիս :

— Ներէ՛, փարիսի սուրբս, եօթանասուն փարա և շատ մը հին քուրջեր ունիմ, ասոնցմով անանկ աղուոր մօմ մը պիտի առնեմ որ դուն ալ սքանչանաս :

— Զգե՛նք հիմա ատիկա, ըսաւ սուրբը՝ դուն արհեստ չունիս, ինչու որ մուրալը՝ գործել չէ : Գտնալիք պանդոկը տէր չունի, եթէ յարմար կը դատես հոն կեցիր. իմս է անիկա և քեզի կուտամ, մինակ հիմակուան խեղճութիւնդ մի՛ մոռնար և աղքատին համար քթիտ եղիր : Երբոր գործերդ յաջողին այն ատեն դուն նորէն Երուսաղէմ դնայ՝ ուխտդ կատարելու :

Այս խօսքին վրայ Ս. Պետրոս անհետացաւ. մուրացիկը մինակ մնալով ճամբան ձեռք առաւ. շիտակ քալեց առանց զգալու իսկ թէ դետէ մը կ'անցնի եւ հասաւ սիրուն շէնքի մը առաջ, որու վրայ գրուած էր Ս. Պետրոսի պանդոկը. Պանդոկապետ Պետրոս :

Դրան սեմին վրայ ծառայ մը երեւցաւ. « Ահա՛ մեր տէրը եկաւ, պօռաց : Տէ՛ր իմ, սենեակնիդ ելէք հագուեցէք և շուտով վար իջէք գործերը կարգի դնելու համար. շատ ճամբորդ կայ ներսը » :

Պետրոս սենեակը ելաւ, հագուեցաւ, կերակուրը ուտելէն ետքը վար իջաւ. մեծ սրահին մէջ լեցուն բազմութիւն կար, ա-

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը կրատարակուի ամէն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին					
Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ		ՀԱՍՑԷ		ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	40 դահեկան	ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ		Տարեկանը	45 դահեկան
Վեցամսեան	20 »	Կ. ՊՈԼԻՍ		Վեցամսեան	25 »
Եռամսեան	10 »	ԵՍԿԻ ԶԱՊԹԻԷ ՃԱՏՏԷՍԻ		Եռամսեան	12 1/2 »
ՌՈՒՍԻՈՅ ՀԱՄԱՐ		ԹԻԼ 61		ՕՏԱՐ ԵՐԳԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	4 ըուպի			Տարեկանը	10 ձրանը

Ձեռնէ կը ծախուի կապը 40 փարս:

մէնքն ալ զինքը բարեւեցին, օղի հրամացուցին և յարգանք խօսեցան հետը, իրացընէ ինքը տէր էր հոն, բոլոր ծառաները կը հնազանդէին ամէն մէկ հրամանին, յաճախորդները «Պետրոս աղա» կ'ըսէին եւ ձեռքը կը թոթուէին:

Գործերը շատ յաջող գացին՝ անանկ որ ըրած ուխտը մտքէն ելաւ:

Զմրան գիշեր մը, հարուստ վաճառականներու հետ վառարանին շուրջը բոլորած օղի կը խմէին, երբ մէկէն դուռը զարնուեցաւ: «Ատ ո՞վ է» պօռաց Պետրոս:

Զայն մը պատասխանեց. «Խեղճ աղքատ մըն է. Աստուծոյ սիրուն, Ս. Պետրոսի համար ըլլայ, կտոր մը հաց տուէք»:

«Թափառաշրջիկ, թերեւս գող մըն է» ըսին վաճառականները: Պետրոս, հարուստ պանդոկապետը՝ սպասաւորին պատուիրեց. «Դուռը մի՛ բանար, և եթէ թշուառականը չերթայ, չունը վրան արծակէ»:

Եւ նորէն սկսաւ խմել ու խնդալ:

Բայց յանկարծ դուռը ինքնին բացուեցաւ և պատկառելի ծերունի մը, գլուխը լոյսէ պսակով՝ ներս մտաւ. Ս. Պետրոսն էր:

«Ճանչցա՞ր ինձի, հարցուց պանդոկապետին, որ դուզողուն ծունդի եկեր էր: Սոսանկ կը պահէս խոտումէ, դուռդ զարնող աղքատը ես էի. հիմայ հասկցայ թէ անցեալ խեղճութիւնդ ի՞նչպէս կը յիշես եղեր: Աղքատ էիր և գթասիրտ չեղար. բոլոր ունեցածդ իմն էր և դուռդ չի բացիր: Մի՛ զարմանար գլխուդ գալիքին վրայ»:

Մէկէն ի մէկ պանդոկին լոյսերը մարեցան, ճամբորդ, սոլասաւոր ամէն բան անհետացաւ, և Պետրոս, մուրացիկը, ինքզինքը գտաւ մութ անտառին մէջ, ցուրտէն սարսուռն, անթութենէ հալած, վրան դըլուխը քուրջերով ծածկուած:

Սկսաւ քալել Երուսաղէմ երթալու համար: Քալեց ու քալեց երկար ատեն, մար-

մինը՝ փուշերէն ծակծկելով, ոտքերը ձիւնին մէջ սառեցնելով:

Առտու մը, արշալոյսին, ցուրտէն ու քաշած տառապանքներէն հալած ու մաշած, փոսի մը եզերքը ինկաւ՝ խորունկ թաղուեցաւ ձիւնին մէջ. կծկըտած տեղը աղօթք մը սկսաւ իր պաշտպան սուրբին, բայց չի կրցաւ աւարտել. ցուրտէն մարմինը սառեցաւ և հոգին երկինք թռաւ:

Այն ատեն իրեն անանկ երեւցաւ որ երազէ մը կ'արթնայ, Դիմացը տեսաւ չքեղ ապարանքի մը ճակատը: Փարուտ, մացառու և փշալից ճամբու մը ծայրը լուսաւոր դուռի մը հասաւ. Արքայութեան դուռն էր այս: Կամայ՝ մը զարկաւ:

Սուրբ Պետրոս անձամբ եկաւ դուռը բանալու:

«Կը յիշե՞ս, երբ իրիկուն մը պանդոկիդ դուռը զարկի՝ ի՞նչ պատասխանեցիր, շատ կ'ուզեմ որ հիմալ ալ ես նոյնը ըսեմ. ի՞նչ կ'ընես եթէ դուրս ձգեմ քեզի, իրաւ որ չիտակ դժողք երթալու էիր: Բայց ինչ որ է, ինձի այնչափ աղօթք ըրած ես որ կը մեղքնամ քեզ: Աստուծոյ հետ կը խօսիմ և հոս կը մնամ: Հաւատա՛ որ բաղդաւոր ես. ո՞ր է դնելիք մոմդ որու վրայ պիտի հիմնայի»:

Եւ Պետրոս Արքայութիւն մտաւ:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԻՔ

Գեր. Տ. Մելքիսեդէկ Ս. Արքեպիսկոպոս Մուրատեան՝ մէկ օրինակ Հանրագիտակ կը նուիրէ Կիպրոսի որբանոցին:

Տիկին Ա. Ն. Պէրպէրեան՝ մէկ օրինակ կը նուիրէ Արմաշի Դպրեվանոց Որբանոցին:

Բանկալմիի Վիէն. Միսիթ. վարժարանին Հոգևարդի աշակերտը՝ իրենց Վերատեսուց Մէնէվիշեան Զ. Դաբրիէլի անուան տարեգարմին առձիւ 1 օրինակ կը նուիրեն Դպրոցի սանուց Սանգարանին:

ԱՐՏՕՆԱՏԷՐ — ԽՄԱԿԲԱՊԵՏ

ԱՐՄԷՆ ԱՌԻՍԻՆԵԱՆ

ՏՊԱԴՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Summary of Geography
of the State of New York

The State of New York is situated in the northeastern corner of the North American continent, and is bounded on the north by the Canadian provinces of Ontario and Quebec, on the east by the Atlantic Ocean, on the south by the States of Pennsylvania and Maryland, and on the west by the State of Vermont. It is the second largest State in the Union, covering an area of 47,155 square miles. The population of the State is 19,549,421, making it the fourth most populous State in the Union. The State is divided into 62 counties, and is further subdivided into numerous towns and villages. The climate of the State is temperate, with a range of temperatures from 30 degrees below zero to 100 degrees above zero. The State is rich in natural resources, including coal, iron, copper, and timber. It is also a major center of manufacturing and commerce in the United States.

The State of New York is a member of the United Nations, the Organization of American States, and the North Atlantic Treaty Organization. It is also a member of the United States of America. The State is a major contributor to the United Nations and the Organization of American States. The State is a major center of manufacturing and commerce in the United States. The State is rich in natural resources, including coal, iron, copper, and timber. It is also a major center of manufacturing and commerce in the United States. The State is a member of the United Nations, the Organization of American States, and the North Atlantic Treaty Organization. It is also a member of the United States of America. The State is a major contributor to the United Nations and the Organization of American States. The State is a major center of manufacturing and commerce in the United States. The State is rich in natural resources, including coal, iron, copper, and timber. It is also a major center of manufacturing and commerce in the United States.

The State of New York is a member of the United Nations, the Organization of American States, and the North Atlantic Treaty Organization. It is also a member of the United States of America. The State is a major contributor to the United Nations and the Organization of American States. The State is a major center of manufacturing and commerce in the United States. The State is rich in natural resources, including coal, iron, copper, and timber. It is also a major center of manufacturing and commerce in the United States. The State is a member of the United Nations, the Organization of American States, and the North Atlantic Treaty Organization. It is also a member of the United States of America. The State is a major contributor to the United Nations and the Organization of American States. The State is a major center of manufacturing and commerce in the United States. The State is rich in natural resources, including coal, iron, copper, and timber. It is also a major center of manufacturing and commerce in the United States.

The State of New York is a member of the United Nations, the Organization of American States, and the North Atlantic Treaty Organization. It is also a member of the United States of America. The State is a major contributor to the United Nations and the Organization of American States. The State is a major center of manufacturing and commerce in the United States. The State is rich in natural resources, including coal, iron, copper, and timber. It is also a major center of manufacturing and commerce in the United States.

Տպագրիչ եւ Փորագրիչ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ա. ՊՈԼԻՍ, ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ԶԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 61.

Պատիւ ունի ծանուցանել թէ՛ պատրաստ է տպագրել ամենայն խնամօք եւ մաքրութեամբ պատկերազարդ եւ թէ՛ առանց պատկերի թուրքերէն, Հայերէն եւ Ֆրանսերէն լեզուաւ Հանդէսք, Դասագրեանք, Տեղեկագիրք, Հաշուեցոյցք, Շրջաբերականք, Հարսանեաց հրաւիրագիրք, Նամակագրութեանք, Այցաքարտք, Մահազդք, ևայլն:

Տպարանս պատրաստ ունի 2000է աւելի բնագիտական, բնապատմական, մարմնամարզական, Ս. Գրոց պատմութեան եւ ամէն տեսակ դասագրեանց յարմար պատկերներ, որոնք ձրի կը տրուին այն Հեղինակաց ու թարգմանչաց՝ որոց գործերն կը յանձնուին իրեն, ու պէտք եղածներն ալ կը փորագրուին ամենայն նրբութեամբ:

Գոհացուցիչ եւ չափաւոր գին:

Կը խնդրուի Մեծ. Հեղինակներէն եւ տպագրութեան վերաբերեալ գործ ունեցողներէն որ նախապէս ուղղակի տպարանս դիմեն՝ առանց դրսէն ո՛ր եւ է միջնորդի, որոց շահելիքն ալ իրենք կը վաստակին:

Գաւառներէն եղած յանձնարարութիւնք ճշդութեամբ եւ խնամքով կը կատարուին՝ եթէ արժէքը տրուած հրամանին հետ զրկուի:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Գ. Յ. Պ. Շապիհ Գարահիսար, — 1-3
թիւերը զրկուեցան: Փոխարժէքը կրնաք ուղղակի մեզի զրկել, կամ ձեր գործակալին միջոցաւ այս տեղ վճարել տալ:

Ա. Տ. Գաւրեմուցի. — Շնորհակալութիւն Ձեր ազնիւ զգացմանց համար, թերթերը այսուհետեւ նոր հասցէին կը զրկուին:

Մ. Դ. Մանիսա. — Կրնաք զրկել ուղղակի մեր հասցէին, կամ մանտա բոսդով:

Յ. Տ. Պ. Ասանա. — Ստացանք Ձեր երկու թղթատարական քարդերը: 1-3 թիւ զատ զատ զրկուեցան հասցէներուն: Շնորհակալութիւն:

Թերթին խմբագրութեան ու բաժանորդագրութեան, ամէն տեսակ թղթակցութեան համար դիմել մինակ սոյն հասցէին

نشانی بربریان مطبعه

استانبول اسکی ضعیفه جادوسی نومرو 71

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Կ. Պոլիս Էսկի Զապթիյէ Զատտէսի քիւ 61

NICHAN BERBÉRIAN
IMPRIMEUR-ÉDITEUR

Samboul, Eski Zabtiye Djaddéssi N. 61

ԱՌԱՋՆՈՐԴ

ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

ՀԵՂԻՆԱԿ

ՍԻՄՕՆ ԶԵՕՄԼԷՔՃԵԱՆ

(ԺԻՐԱՅՐ ՇԻՐԱԿԱՅԻ)

Անհրաժեշտ ամէն վաճառականի, գրագրի եւ առուստրով գրադոյներու:

Գին Բ. Հատորի 12 շրջ. — Կանխիկ վճարողներու համար զեղչ 15 %:

Դիմել ԹերթիՍ հասցէին

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Հին Ուխտի (Սրբազան պատմութիւն)	4
Նոր » » »	4
Մաղկաքաղ (Ընտիր կտորներ ընթերց.)	3
Ֆրանսերէն պատկերազարդ Գերական	2
Կ. Տէմիրեան էֆ. Իրագիտութեան Անդրդշական դասընթացքը:	
Մաղկաքաղ եկեղեցական պատմութեան	4
Քրիստոնէական (Ս. Խանճեան)	2
Ժողովրդական Տարեցոյց	6
Բուրաստան Մանկանց (Տարեկանը)	10
Աղօթագիրք	10

Հանրագիտակ ձեռքի կը ծախուշի Պոլսոյ մէջ հատոր
40, իսկ գաւառաց մէջ 50 փարայ: